— Ցանուն իշխան Զախարի Դաւիթեան Մելիքովի, պարագլխի ազնուականաց վրաց Տփխեաց։ Թ. 150.

Գ.

Հայրապետական պարգեւք.

Կոնդակ վարդապետական լանջախաչի յանուն Տ. Աբգար ա. քահանայի Տ. Յարութիւնեան միաբանի ս. Աստուածածին եկեղեցւոյ Բագու քաղաքի։ Թ. 94.

— Լանջախաչի յանուն Տ. Յովհաննէս քահանայի Նազարեան, միաբանի ս. Աստուածածին եկեղեցւոյ Բագու քաղաքի։ Թ. 95.

— Կամիլաւկայի յանուն Տ. Սողոմոն քահանայի Տ. Մարտիրոսեանց Մատրասա գեղջ։ Թ. 103.

ԲԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Յունվարի 26-ին Սինոդը մերժեց Հին Նախիջևանի Հոգևոր Կառավարութեան քարտուղար Յարութիւն Տէր Գաբրիէլեանի խնդիրը ռոճկի յաւելման մասին՝ մինչև նոր շտատ կազմելը։

Յունվարի 28-ին Սինոդը հրամայեց Երևանի Կոնսիստորիային Հայաստանեայց եկեղեցւոյ ծոցն ընդունել Ղուլինան գիւղի բնակիչ քրդուհի Դիւլիզար Ղադոյեանին և մկրտել սահմանեալ կարգաւ։

Յունվարի 31-ին Սինոդը լուծեց Ղազախի գաւառի Աղդան գիւղի բնակիչ Առաքել Բաղդասարեանի և Սարղղի Խաչինեանցի պսակը և իրաւունք տուաւ Առաքելին կրկին ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը լուծեց Աղէքսանդրապոլի բնակիչ Աղաբէկ Սարգսեանի և Համասփիւռ Յարութիւնեանի պսակը և թոյլատրեց կնոջը նորէն ամուսնանալ։

— Փետրվարի 4-ին Սինոդը մերժեց Տփխիսի բնակիչ Աղէքսանդր Կարախանեանի ամուսնալուծութեան խնդիրը և գործը վերադարձրեց Վրաստանի և Իմերէթի Կոնսիստորիային։

Նոյն թուին Սինոդը լուծեց Շուշուայ գաւառի Տող գիւղի բնակիչ Սարգիս Պետրոսեանի և Նախշուն Գրիգորեանի պսակը և իրաւունք տուաւ Սարգսին նորէն ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը որոշեց հրամայել Վրաստանի և Իմերէթի Կոնսիստորիային՝ ի հաշտութիւն հրաւիրել Լոռուայ գաւառի Ուրուտ գիւղի բնակիչ Մինաս Մանուկեանին և նրա կնոջ Սօնա Մովսիսեանին, հակառակ դէպքում լուծել նրանց ամուսնութիւնը և իրաւունք տալ Մինասին նորից ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Շուշիքեանդ գիւղի բնակիչ Զաւադ Խաչատրեան Թովմասեանի և Զառվարդ Բալասանեան Յովհաննիսեանի պսակը աղգակցական եօթներորդ աստիճանում։

Նոյն թուին Սինոդը հաստատեց Թիֆլիզի եկեղեցիների համար կազմած սրբազնագործ պաշտօնեաների շտատը և որոշեց այդ մասին յայտնել քահանաներին Կոնսիստորիայի միջոցաւ. միևնոյն ժամանակ պատուիրել Թեմական Ատեանին, որ սարկաւագներին քահանայ ձեռնադրի ապագայում, երբ տեղեր կը բացուեն, իսկ սարկաւագութեան համար այսուհետև ընտրել այնպիսիներին, որոնք աւարտած լինին կամ ճեմարանի և կամ Թեմական դպրանոցի դասընթացը։

Նոյն թուին Սինոդը քահանայութեան արժանի գտաւ Կարապետ Շիրազեանին Հին-Նախիջևանի Քաղաքիկ գիւղի

վրայ քահանայ ձեռնադրելու և որոշեց դիմել Երևանի Նահանգապետին օրինասահման համաձայնութեան համար։

Փետրվարի 11-ին Սինոդը թոյլ տուաւ Երևանի Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Արմենակ (նոյն և Կիւրեղ) Գաբոյեանցին և ձեռնադրել նրան սարկաւագ Ղբչաղ գիւղի եկեղեցու վրայ։

Նոյն թուին Սինոդը լուծեց Բաքու քաղաքի բնակիչ Մկրտիչ Առուշանեանցի և Եղիսաբէթ Եախչիբէկեանցի պսակը և իրաւունք տուաւ Մկրտչին նորէն ամուսնանալու։

Փետրվարի 16-ին Սինոդը թոյլատրեց Ղարաբաղի Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Վարդազար Տէր Աստուածատրեան Տէր Յովհաննիսեանցին և ձեռնադրել նրան քահանայ Հաթերք գիւղի վրայ։

Փետրվարի 18-ին Սինոդը թոյլատրեց Աստրախանի թեմական Կոնսիստորիային Հայաստանեայց եկեղեցու ծոցն ընդունել Վլադիկաւկազի բնակիչ Աղաբէկ Ջաֆար օղլուն և մկրտել սահմանեալ կարգաւ։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Երևանի Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Զանգեզուրի գաւառի Խնձորեսկ գիւղի բնակիչ Տիգրան Սաղանդարեանին և ձեռնադրել սարկաւագ նոյն գիւղի եկեղեցու վրայ։

Փետրվարի 23-ին Սինոդը յանցաւոր ճանաչեց Երևան քաղաքի քահանայ Տէր Ռափայէլ Ռուբինեանցին և դադարեցրեց նրան քահանայագործութիւնից մի ամիս ժամանակով։